



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

Երևան – 10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

« »

2017 թ.

N

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ - ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
պարոն ԱՐԱ ՍԱՂԱԹԵԼՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սաղաթեյյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» և «Վիճակախաղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի (Պ-187-20.11.2017-ՏՀ-011/0 և Պ-187¹-20.11.2017-ՏՀ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը.

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2017 թվականի դեկտեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 1500-Ա որոշումը:

Հարգանքով՝

ՎԱՀԵ ՍՏԵՓԱՆՅԱՆ

«ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԵՐԻ, ԻՆՏԵՐՆԵՏ ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԵՐԻ ԵՎ ԽԱՂԱՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՎԻՃԱԿԱԽԱՂԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ (Պ-187-20.11.2017-ՏՀ-011/0 ԵՎ Պ-187-20.11.2017-ՏՀ-011/0) ՓԱԹԵԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը կիսում է հեղինակների մտահոգությունը և կարևորում է նախագծերի փաթեթով առաջարկվող հարաբերությունների կարգավորման անհրաժեշտությունը: Համամիտ ենք, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների շահերի և իրավունքների պատշաճ պաշտպանության նպատակով վիճակախաղի կազմակերպիչների կողմից՝ 18, իսկ շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի կամ խաղատների կազմակերպիչների կողմից՝ 21 տարեկանը չլրացած անձանց վիճակախաղերին կամ շահումով խաղերին (այդ թվում՝ ինտերնետ շահումով խաղերին) մասնակցելու իրավունք ընձեռելու հնարավորությունները նվազագույնին հասցնելու կամ բացառելու նպատակադրումով անհրաժեշտ է վերանայել գործող օրենքներով սահմանված տուգանքների չափերը:

Այնուհանդերձ հարկ է նշել, որ՝

1) «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» և 2.1-ին մասի «ա» կետերի համաձայն՝ շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների գործունեության կազմակերպիչն արգելում է քսանմեկ տարին չլրացած ֆիզիկական անձանց մուտքը խաղասրահ, իսկ 13-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետում նշված պարտականության չկատարման համար նախատեսված է տուգանք՝ **խախտման յուրաքանչյուր դեպքի համար՝** երկու հարյուր հազար դրամի չափով.

2) «Վիճակախաղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ վիճակախաղին մասնակցելու իրավունք ունեն միայն 18 տարեկանը լրացած անձինք, իսկ 14-րդ հոդվածի 2-րդ մասի «ը» կետով այդ պարտականության չկատար-

ման համար նախատեսված է տուգանք՝ **խախտման յուրաքանչյուր դեպքի համար՝** հարյուր հազար դրամ:

Ներկայացված նախագծերով նախատեսվում է սահմանել կազմակերպիչների պարտականությունների չկատարման համար, որպես պատասխանատվության միջոց, խախտման առաջին դեպքի համար՝ երկու միլիոն դրամ, խախտման երկրորդ դեպքի համար՝ հինգ միլիոն դրամ, իսկ խախտման երրորդ դեպքի համար՝ տասը միլիոն դրամ տուգանք (ի տարբերություն գործող օրենքներով նախատեսված **խախտման յուրաքանչյուր դեպքի** համար կիրառվող տուգանքի): Այսինքն, նախագծերով ներկայացված տուգանքի չափը սահմանվում է յուրաքանչյուր անգամ **հայտնաբերված խախտման հաջորդական դեպքի համար:**

Նախագծերով նախատեսված չէ խախտման դեպքերի միջև ժամկետ:

Այդ կապակցությամբ հայտնում ենք, որ՝

Վարչական պատասխանատվությունը, որպես իրավախախտի նկատմամբ ներգործության միջոց, ունի իրավախախտին դաստիարակելու, ինչպես նաև վարչական իրավախախտումները կանխելու նպատակ: Այդ նպատակներին հասնելու համար անհրաժեշտ է, որ վարչական պատասխանատվության միջոցը բխի համաչափության սահմանադրական սկզբունքի էությունից, այսինքն լինի բավարար և համաչափ՝ իր նպատակին ծառայելու համար: Նշվածից ելնելով՝ գտնում ենք, որ, ցանկացած հակաիրավական արարքի համար պատասխանատվության միջոց ու չափ նախատեսելիս, նախ և առաջ անհրաժեշտ է համոզվել, որ դրանք հնարավորություն են տալու հասնելու վարչական պատասխանատվության նպատակների իրականացմանը:

Նախագծերի 1-ին հոդվածներով նախատեսված սանկցիանները չեն համապատասխանում համապատասխանաբար «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ և «Վիճակախաղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածներով նույն խմբի համար սահմանված

սանկցիաներին: Այդ առումով վերանայման կարիք ունի նախագծով սահմանվող տուգանքի չափը՝ հաշվի առնելով սանկցիաների համաչափության սկզբունքը:

Նախագծերի համաձայն՝ լիազոր մարմինը լիցենզիայի գործողությունը դադարեցնում է, եթե կազմակերպիչը չորրորդ անգամ խախտել է «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետով, կամ 2.1-ին մասի «ա» կետով, կամ «Վիճակախաղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված պահանջները: Այդ առումով հիմնավորման կարիք ունի, թե նախագծերով ինչու է կազմակերպչին խախտման երեք դեպքի հնարավորություն տրվում:

Ամփոփելով վերը նշվածը, հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից մշակված 2017 թվականի հոկտեմբերին պետաիրավական նախարարական կոմիտեի նիստում քննարկված Վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի նախագծի հետ ներկայացված հարակից օրենքների նախագծերի փաթեթով նախատեսվում է ուժը կորցրած ճանաչել «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ և «Վիճակախաղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածներով սահմանված տուգանքին վերաբերող դրույթները, առաջարկում ենք նախագծերի կարգավորման առարկա հանդիսացող հարաբերությունները քննարկել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության նոր օրենսգրքով առաջարկվող իրավակարգավորումների համատեքստում: Առաջիկայում Հայաստանի Հանրապետության կառավարության հավանությանն արժանանալուց հետո Վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի նախագիծը կներկայացվի Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի քննարկմանը:

Միաժամանակ մեր պատրաստակամությունն ենք հայտնում նախագծերի հեղինակների հետ քննարկել նախագծերի կարգավորման առարկա հանդիսացող հարաբերությունների

կարգավորումը վարչական պատասխանատվության միջոցի համաչափության տեսանկյունից, որը լինի բավարար և համաչափ՝ իր նպատակին ծառայելու համար:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ****«ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԵՐԻ, ԻՆՏԵՐՆԵՏ ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԵՐԻ ԵՎ ԽԱՂԱՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ****Հոդված 1.**

1. «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» Հայաստանի Հանրապետության 2003 թվականի դեկտեմբերի 13-ի ՀՕ-1-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 13-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետի «խախտման յուրաքանչյուր դեպքի համար՝ երկու հարյուր հազար դրամի չափով» բառերը փոխարինել «խախտման առաջին դեպքի համար՝ երկու միլիոն դրամ, խախտման երկրորդ դեպքի համար՝ հինգ միլիոն դրամ, իսկ խախտման երրորդ դեպքի համար՝ տասը միլիոն դրամ» բառերով:

Հոդված 2.

1. Օրենքի 15-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի «բ» կետը «խախտում» բառից հետո լրացնել «, բացառությամբ սույն օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետով նախատեսված խախտումների» բառերով,

2) 1-ին մասը «գ» կետից հետո լրացնել նոր՝ «գ1» կետով.

«գ1) եթե կազմակերպիչը չորրորդ անգամ խախտել է սույն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետով կամ 2.1-ին մասի «ա» կետով սահմանված պահանջը.»:

Հոդված 3.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«ՎԻՃԱԿԱԽԱՂԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1.

1. «Վիճակախաղերի մասին» Հայաստանի Հանրապետության 2003 թվականի դեկտեմբերի 17-ի ՀՕ-3-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 14-րդ հոդվածի՝

1) 2-րդ մասի «ը» կետի «5-րդ, 6-րդ կամ 7-րդ մասերով» բառերը փոխարինել «6-րդ կամ 7-րդ մասերով» բառերով,

2) 2-րդ մասը լրացնել նոր՝ «թ» կետով.

«թ) խախտել է սույն օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված պահանջը՝ խախտման առաջին դեպքի համար՝ երկու միլիոն դրամ, խախտման երկրորդ դեպքի համար՝ հինգ միլիոն դրամ, իսկ խախտման երրորդ դեպքի համար՝ տասը միլիոն դրամ:»,

3) 3-րդ մասի «նույն մասի «ա» և «ը» կետերում» բառերը փոխարինել «նույն մասի «ա», «ը» և «թ» կետերում» բառերով:

Հոդված 2.

1. Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասը «գ» կետից հետո լրացնել նոր՝ «գ1» կետով.

«գ1) եթե կազմակերպիչը չորրորդ անգամ խախտել է սույն օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված պահանջը.»:»,

Հոդված 3.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

1. Առկա խնդիրները

Վերջին շրջանում մամուլում և սոցիալական ցանցերում գնալով ավելի հաճախակի են դառնում վիճակախաղի կազմակերպիչների կողմից՝ 18, իսկ շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի կամ խաղատների կազմակերպիչների կողմից՝ 21 տարեկանը չլրացած անձանց վիճակախաղին կամ շահումով խաղերին, հատկապես՝ ինտերնետ շահումով խաղերին կամ խաղատներին մասնակցելու իրավունք ընձեռելու վերաբերյալ հրապարակումները: Նման հրապարակումները փաստում են, որ գործող օրենսդրության առկա կարգավորումների խախտման արդյունքում ոչ միայն կարող է խեղվել անչափահաս քաղաքացու հոգեբանությունը, այլև շատ դեպքերում կործանարար ազդեցություն ունենալ առանձին անչափահաս քաղաքացիների ու նրանց ընտանիքների համար: Նման դեպքերի նկատելի աճին նպաստել է նաև լիզենցավորված այդ գործունեությունն իրականացնող ընկերությունների կողմից իրենց ցանցերի լայն տարածումը Հայաստանի Հանրապետությունում, համացանցային տիրույթում շահումով խաղերի կազմակերպման ծավալների աճող միտումները, ինչպես նաև սահմանված տուգանքների անհամապատասխանությունը պատճառված վնասին, թույլ վարչական վերահսկողությունը և այլն: «Վիճակախաղերի մասին» ՀՀ օրենքը նման իրավախախտման յուրաքանչյուր դեպքի համար նախատեսում է տուգանքի կիրառում՝ 100.000 դրամի չափով, իսկ «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» ՀՀ օրենքը՝ յուրաքանչյուր դեպքի համար 200.000 դրամի չափով:

2. Առաջարկվող կարգավորումները

Փաթեթով առաջարկվում է հիշյալ իրավախախտումների առաջին դեպքի համար սահմանել երկու միլիոն, երկրորդ դեպքի համար՝ հինգ միլիոն, երրորդ դեպքի համար՝ տասը միլիոն դրամ տուգանք, իսկ չորրորդ անգամ այդպիսի իրավախախտումներ թույլ տալու դեպքում կազմակերպչի լիցենզիայի գործողությունը դադարեցվում է:

3. Ակնկալվող արդյունքները

Փաթեթի ընդունման արդյունքում նախ՝ կիրառվող տուգանքի չափը կհամապատասխանի գերշահույթով աշխատող կազմակերպությունների շահույթին, երկրորդ՝ տուգանքների մեծ չափերը և նշված իրավախախտումը չորրորդ անգամ կատարելու դեպքում լիցենզիայից զրկվելը վիճակախաղի կազմակերպիչների համար կունենան զսպիչ նշանակություն, ինչը կհանգեցնի վիճակախաղերի դեպքում՝ 18, իսկ շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի կամ խաղատների դեպքում 21 տարեկանը չլրացած անձանց՝ վիճակախաղերին կամ շահումով խաղերին, ինտերնետ շահումով խաղերին կամ խաղատներին մասնակցության դեպքերի հնարավորինս նվազմանը: Էական է այն հանգամանքը, որ վերոնշյալ շուկայում առկա է իրական կոշտ մրցակցություն, և նման տուգանքների սահմանման պարագայում այն կհանգեցնի շուկայի մասնակիցների կողմից միմյանց գործունեության փոխադարձ վերահսկողության, ինչը կարող է միայն օգտակար լինել խնդրի լուծման տեսանկյունից: